

նման վերջնագրերը էր զրկեր Հայաստանի կառավարութեան, որոնց բովանդակութիւնը համազօր էր Հայաստանի անկախութեան ջնջումին:

Այս երևույթները պարզ ցոյց կուտան, որ թուրքիոյ միլլի կառավարութեան 1920-ի ընթացքին Հայաստանի դէմ վարած քաղաքականութեան արժանորդը կը գտնուէր նոյն տարուան Ապրիլ ամսուն ստորագրուած բոլշևիկ-միլլի գաղտնի զինակցութեան պայմանագրութեան մէջ: Իսկ Մուսթաֆա Քեմալի տուած կարճ պատմութիւնը համապատասխան է իրական պատմութեան, այլ պարզապէս հնարք մըն է պատմութեան առջև թաղցնելու ճշմարտութիւնը, — ըսն մը, որ անհնարին է:

Համոզուած ենք որ շատ ժամանակ չանցած՝ ինչպէս ուրիշ գաղտնի թուղթեր, ասիկա ալ լոյս աշխարհ կ'ելլէ եւ պատմութեան սեփականութիւնը կը դառնայ, եթէ մինչեւ հիմա արդէն է գարձած անաչառ պատմագիրներու նօթագրութեանց մէջ:

Տ Է Ր Վ Ի Շ Ը

Հնդիկ տէրվիշ մը՝ օր ըստ օրէ հեռացած մարդոցմէն, կ'արհամարհէր ն'ոյնիսկ անցնիլ ա'յն համբաներէն, ուր մուրացկաններ կը սպասէին օրն ի բուն... Մարդկային վայրագութիւններէն խորշած, անոնց գոհը եղող քշուառներուն իսկ զգուսնաբով կը նայէր եւ թալոսին հանդէպ սրտնեղած իր անկեղծութիւնը այլեւս անկարելի կը զգար ապրիլ միասին, կատաղի հայեոյաններուն մէջ կորսուած միմուսներ լսելու համար: Երկա՛ր տարիներ գտնուած էր մարդոց ամէն խաւերուն մէջ եւ, վերջապէս, իր սիրտը հանդարտեցնելու համար, որոշած էր հեռանալ անոնցմէ ու ամայութեան մէջ լուսիւննո՛վ ամփոփուիլ:

Այսպէ՛ս, վշտացած բոլոր անձանօքներուն, համբայ ինկաւ փողփէն դուրս, փայելու համար մինչեւ հո՛ն, ուր այլեւս ո՛չ ոք կարելի ըլլար գտնել: Ամիսներ տեւեց իր համբերութիւնը եւ դեռ տէրվիշը կը փնտռէր իսկակա՛ն առանձնութիւնը:

Իրիկո՛ւն մ'էր, վերջապէս իր ստուերները կը փռէր ամայութեան մէջ՝ ուր միայն երկինքի հեռաւոր ծնրադրումը կը նշմարուէր:

Գարձեա՛լ կը փայլէր պետր տէրվիշը, որովհետեւ կը կարծէր քէ մօտ էր ովկիանոսը, որուն ափերուն վրայ միա՛յն ապառաժներ՛ր կը սպասէին: Գիշերը իր անձայրածիր սեւերուն մէջ ծածկած ամբողջ լուսիւնը, փոշոտ արահետ մը կը բանար տէրվիշին, որ կը հասնէր ծովերուն: Պահե՛րը ո՛չ ոք կը համբէր մուսիին մէջ եւ ահա հասեր էր ովկիանոսին ափունքը:

Ահա՛ անստոյգ ապառաժներուն ստուերները, խոժոռ առանձնութեամբ կը դիտէին աստղերուն առկայծ ցոլփերը: Արշալոյսը, հեռաւոր մշուշներու քանձրութիւնը կը սկսէր վիրաւորել ու ովկիանոսը կ'արթննար հորիզոններէն, մրրիկին կատաղութեա՛նը մէջ հրպարտ. մինչ խաւարչիտ ալիքներուն վրայ, դեռ ո՛չ մէկ կայմ կը շարժէր:

Տէրվիշը լո՛ւռ էր իր հրնուսնիքն մէջ եւ ականջ կը դնէր միջոցին: Հեռո՛ւ, շատ հեռո՛ւ էր մարդոցմէ ու իր սիրտը այլեւս չէր կծկըւեր անոնց համար: Սկսաւ մօտենալ ապառաժներուն. անշուշտ վայրերուն մէջ միմիա՛յն իր տրեխները կը խժրօքային աւազին վրայ, քա՛յց, բան մը նշմարեց ինչ անդին. ժայռերուն քով կարծես սեւ ու խոշոր պարկ մը նետուած էր իր ծանրութեանը համար: Մօտեցաւ անոր, ծոցեցաւ եւ ուզեց դպչիլ, քայց յանկարծ ետ փառուցաւ ապշահար ու գոչումի աղաղակով մը իր Աստուածը սկսաւ կանչել:

Դիա՛կ մ'ըն էր ան, դէմքը գետնին գարնըւած, որուն գանկէն դեռ արիւն կը հոսէր: Շփոթեցա՛ւ տէրվիշը լուռ եւ իր այլայլուն զգիլանքին մէջ սկսաւ շուրջը նայիլ ու վախճնալ... Երկա՛ր մտածեց ու հարցուց ինքնիրեն.

— Հո՞ս ալ հասեր են մարդիկ նոյն կիրճերով ծարուցած...

Ոչի՛նչ կրցաւ խորհիլ, համոզելու համար իր հոգին: Ծաղրուած զգաց ինքզինքը, երբ կեանքին հեզմանքը տեսաւ, որ իրմէ առաջ էր հասեր հոն, եւ որոշեց վերադառնալ, որովհետեւ ա՛յն ատեն միմիա՛յն հասկցաւ քէ՛ տառապանքն ու վիշտը, ատելութի՛ւնն ու կոխը ամէն տե՛ղ են եւ անոնցմէ խուսափելու համար պէտք է միասին ապրիլ բայց միայն հանչնալ զանոնք: